ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2021-2023թթ. ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր իրականացված փոխանցումների վերաբերյալ (հունվար)





2023թ. հունվարին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացվել է 152.9 մլրդ դրամ, ինչը 91.3 մլրդ դրամով կամ 148.2%-ով ավել է 2022թ. և 93.3 մլրդ դրամով կամ 156.5%-ով ավել է 2021թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. դեկտեմբերի ցուցանիշից փոքր է 80.2 մլրդ դրամով կամ 34.4%-ով: 2023թ. հունվարին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց կողմից արտերկիր է փոխանցվել 85.5 մլրդ դրամ, ինչը 43.4 մլրդ դրամով կամ 103.1%-ով ավել է 2022թ. և 42.7 մլրդ դրամով կամ 99.8%-ով ավել է 2021թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. դեկտեմբերի ցուցանիշից պակաս է 28.5 մլրդ դրամով կամ 25%-ով: 2023թ. հունվարին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և արտերկիր փոխանցված դրամական միջոցների զուտ ներհոսքը կազմել է 67.4 մլրդ դրամ, ինչը 47.9 մլրդ դրամով կամ 245.6%-ով ավել է 2022թ. և 50.6 մլրդ դրամով կամ 301.2%-ով ավել է 2021թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. դեկտեմբերի ցուցանիշից պակաս է 52 մլրդ դրամով կամ 43.6%-ով:

2023թ. հունվարին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացվել է 386.1 մլն դոլար, ինչը 258.2 մլն դոլարով կամ 201.9%-ով ավել է 2022թ. և 271.7 մլն դոլարով կամ 237.5% -ով ավել է 2021թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. դեկտեմբերի ցուցանիշից պակաս է 204.8 մլն դոլարով կամ 34.7%-ով: 2023թ. հունվարին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց կողմից արտերկիր է փոխանցվել 215.9 մլն դոլար, ինչը 128.5 մլն դոլարով կամ 147%-ով ավել է 2022թ. և 133.8 մլն դոլարով կամ 163%- ով ավել է 2021թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. դեկտեմբերի ցուցանիշից պակաս է 73.2 մլն դոլարով կամ 25.3%-ով: 2023թ. հունվարին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և արտերկիր փոխանցված դրամական միջոցների զուտ ներհոսքը կազմել է 170.2 մլն դոլար, ինչը 129.7 մլն դոլարով կամ 320.2%-ով ավել է 2022թ. և 137.9 մլն դոլարով կամ 426.9%-ով ավել է 2021թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. դեկտեմբերի ցուցանիշից պակաս է 131.6 մլն դոլարով կամ 43.6%-ով:

* Տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի ինտերնետային կայքի արտաքին հատվածի վիճակագրության հրապարակումները՝ ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր իրականացված փոխանցումների վերաբերյալ